

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ
1998 թվականի փետրվարի 16-ի թիվ 98/6/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

սպառողներին առաջարկվող ապրանքների գնանշման մասով սպառողների
պաշտպանության մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և
մասնավորապես՝ դրա 129-րդ հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ⁽¹⁾,
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի
եզրակացությունը ⁽²⁾,
գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածի «բ» կետով սահմանված ընթացակարգի
համաձայն ⁽³⁾, Համաձայնեցման կոմիտեի կողմից 1997 թվականի դեկտեմբերի 9-
ին հաստատված համատեղ տեքստի լույսի ներքո,

- 1) քանի որ շուկայի թափանցիկ գործունեությունը և տրամադրվող ճշգրիտ տեղեկությունները գործում են ի նպաստ սպառողների պաշտպանության և ձեռնարկությունների ու ապրանքների միջև առողջ մրցակցության,
- 2) քանի որ սպառողների համար պետք է երաշխավորվի պաշտպանության բարձր մակարդակ, քանի որ Համայնքը պետք է նպաստի դրան՝ ձեռնարկելով կոնկրետ գործողություն, որն օժանդակում և լրացնում է անդամ պետությունների կողմից որդեգրված՝ սպառողների համար նրանց

¹ ՊՏ C 260, 5.10.1995թ., էջ 5 և

ՊՏ C 249, 27.8.1996 թ., էջ 2:

² ՊՏ C 82, 19.3.1996 թ., էջ 32:

³ Եվրոպական պառլամենտի 1996 թվականի ապրիլի 18-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 141, 13.5.1996 թ., էջ 191): Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 27-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 333, 7.11.1996 թ., էջ 7) և Եվրոպական պառլամենտի 1997 թվականի փետրվարի 18-ի որոշում (ՊՏ C 85, 17.3.1997 թ., էջ 26): Եվրոպական պառլամենտի 1997 թվականի դեկտեմբերի 16-ի որոշում և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 18-ի որոշում:

- առաջարկվող ապրանքների գների վերաբերյալ ճշգրիտ, թափանցիկ եւ հստակ արտահայտված տեղեկությունների մասով քաղաքականությանը,
- 3) քանի որ «Սպառողների պաշտպանության եւ տեղեկատվական քաղաքականության վերաբերյալ Եվրոպական տնտեսական համայնքի նախնական ծրագրի մասին» Խորհրդի 1975 թվականի ապրիլի 14-ի բանաձեւով ⁽¹⁾ եւ «Սպառողների պաշտպանության եւ տեղեկատվական քաղաքականության վերաբերյալ Եվրոպական տնտեսական համայնքի երկրորդ ծրագրի մասին» Խորհրդի 1981 թվականի մայիսի 19-ի բանաձեւով ⁽²⁾ նախատեսվում է գնանշման ընդհանուր սկզբունքների սահմանում,
- 4) քանի որ այդ սկզբունքները սահմանվել են որոշ սննդամթերքների գնանշմանը վերաբերող 79/581/ԵՏՀ հրահանգով ⁽³⁾ եւ ոչ պարենային ապրանքների գնանշմանը վերաբերող 88/314/ԵՏՀ հրահանգով ⁽⁴⁾,
- 5) քանի որ ապացուցվել է, որ բավականին բարդ է կապ ապահովել ապրանքների միավոր գնի նշման եւ Համայնքի մակարդակով ընդունված արժեքային սանդղակին համապատասխան նախօրոք սահմանված քանակությամբ կամ տարողությամբ նախափաթեթավորման միջեւ, քանի որ այդպիսով անհրաժեշտ է հրաժարվել այդ կապի ապահովումից հոգուտ նոր պարզեցված մեխանիզմի եւ ի շահ սպառողի՝ չհակասելով փաթեթավորման ստանդարտացումը կարգավորող կանոններին,
- 6) քանի որ վաճառքի գինը եւ միավոր գինը նշելու պարտավորությունն էապես նպաստում է սպառողներին տրամադրվող տեղեկությունների բարելավմանը, քանզի դա ամենահեշտ ճանապարհն է՝ սպառողներին հնարավորություն տալու օպտիմալ կերպով գնահատելու եւ համեմատելու ապրանքների գները եւ հետեւաբար պարզ համեմատությունների հիման վրա գիտակից ընտրություն կատարելու,

¹ ՊՏ C 92, 25.4.1975 թ., էջ 1:

² ՊՏ C 133, 3.6.1981 թ., էջ 1:

³ ՊՏ L 158, 26.6.1979 թ., էջ 19: Հրահանգը՝ 95/58/ԵՀ հրահանգով վերջին անգամ կատարված փոփոխություններով (ՊՏ L 299, 12.12.1995թ., էջ 11):

⁴ ՊՏ L 142, 9.6.1988թ., էջ 19: Հրահանգը՝ 95/58/ԵՀ հրահանգով վերջին անգամ կատարված փոփոխություններով (ՊՏ L 299, 12.12.1995 թ., էջ 11):

- 7) քանի որ հետեւաբար պետք է սահմանվի ընդհանուր պարտավորություն՝ բոլոր ապրանքների դեպքում նշելու թե՛ վաճառքի գինը եւ թե՛ միավոր գինը՝ բացառությամբ առանց փաթեթվածքի վաճառվող ապրանքների, որոնց դեպքում վաճառքի գինը չի կարող որոշվել, քանի դեռ սպառողը չի նշել, թե որքան է պահանջվում այդ ապրանքից,
- 8) քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ որոշ ապրանքներ սովորաբար վաճառվում են մեկ կիլոգրամից, մեկ լիտրից, մեկ մետրից, մեկ քառակուսի մետրից կամ մեկ խորանարդ մետրից բացի այլ քանակությամբ, քանի որ այդպիսով նպատակահարմար է անդամ պետություններին տալ միավոր գնի արտահայտումը մեկ այլ քանակական միավորով թույլատրելու հնարավորություն՝ հաշվի առնելով ապրանքի բնույթը եւ այն քանակությունը, որով դա սովորաբար վաճառվում է տվյալ անդամ պետությունում,
- 9) քանի որ միավոր գինը նշելու պարտավորությունը մանրածախ առետրով զբաղվող որոշ փոքր ձեռնարկությունների համար կարող է որոշակի հանգամանքներում ավելորդ բեռ առաջացնել, քանի որ անդամ պետություններին հետեւաբար պետք է թույլատրվի ձեռնպահ մնալ այս պարտավորությունը համապատասխան անցումային ժամանակահատվածի ընթացքում կիրառելուց,
- 10) քանի որ անդամ պետությունները պետք է նաեւ ազատ լինեն հրաժարվելու այն ապրանքների միավոր գինը նշելու պարտավորությունից, որոնց դեպքում նման գնանշումն անօգուտ կլիներ կամ հավանական է, որ շփոթմունք կառաջացներ, օրինակ, երբ քանակության նշումը հարմար չէ գնի համեմատության նպատակով, կամ երբ միեւնույն փաթեթվածքի մեջ տարբեր ապրանքներ են իրացվում,
- 11) քանի որ ոչ պարենային ապրանքների դեպքում անդամ պետություններն իրականացվող մեխանիզմի կիրառությունը դյուրացնելու նպատակով ազատ են կազմելու ապրանքների կամ ապրանքների կատեգորիաների ցանկ, որոնց դեպքում շարունակում է կիրառվել միավոր գինը նշելու պարտավորությունը,

- 12) քանի որ Համայնքի մակարդակով սահմանված կանոնների միջոցով հնարավոր է ապահովել համանման եւ թափանցիկ տեղեկություններ, որոնք ներքին շուկայի համատեքստում կլինեն հոգուտ բոլոր սպառողների, քանի որ նոր, պարզեցված մոտեցումը եւ՝ անհրաժեշտ է, եւ՝ բավարար սույն նպատակին հասնելու համար,
- 13) քանի որ անդամ պետությունները պետք է ապահովեն համակարգի արդյունավետությունը, քանի որ համակարգի թափանցիկությունը պետք է պահպանվի նաեւ եվրոյի ներմուծումից հետո, քանի որ այդ նպատակով նշման ենթակա գների առավելագույն քանակը պետք է սահմանափակվի,
- 14) քանի որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել մանրածախ առետրով զբաղվող փոքր ձեռնարկություններին, քանի որ այդ նպատակով Հանձնաժողովը պետք է սույն հրահանգի կիրառման վերաբերյալ իր հաշվետվության մեջ, որը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրվանից հետո երեք տարվա ընթացքում, առանձնահատուկ կերպով հաշվի առնի հրահանգի կիրառման ընթացքում մանրածախ առետրով զբաղվող փոքր ձեռնարկությունների, *inter alia (ի թիվս այլնի)*, տեխնոլոգիական զարգացումների եւ միասնական արժույթի ներմուծման առնչությամբ ձեռք բերած փորձը, քանի որ 6-րդ հոդվածում նշված անցումային ժամանակահատվածը հաշվի առնելով՝ նշված հաշվետվությունը պետք է ուղեկցվի առաջարկով,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն հրահանգի նպատակն է նախատեսել առետրային գործունեություն իրականացնողների կողմից սպառողներին առաջարկվող ապրանքների վաճառքի գնի եւ դրանց չափման մեկ միավորի գնի նշում՝ սպառողներին տրամադրվող տեղեկությունների բարելավման եւ գների համեմատությունը դյուրացնելու նպատակով:

Հոդված 2

Սույն հրահանգի նպատակներով.

- ա) **վաճառքի գին** նշանակում է մեկ միավոր ապրանքի կամ ապրանքի տվյալ քանակության վերջնական գին, ներառյալ՝ ԱԱՀ-ն եւ մյուս բոլոր հարկերը.
- բ) **միավոր գին** նշանակում է ապրանքի մեկ կիլոգրամի, մեկ լիտրի, մեկ մետրի, մեկ քառակուսի մետրի կամ մեկ խորանարդ մետրի կամ մեկ այլ քանակական միավորի վերջնական գին, ներառյալ՝ ԱԱՀ-ն եւ մյուս բոլոր հարկերը, որը համապատասխան անդամ պետությունում լայնորեն եւ սովորաբար օգտագործվում է կոնկրետ ապրանքների իրացման դեպքում.
- գ) **առանց փաթեթվածքի վաճառվող ապրանքներ** նշանակում է այն ապրանքները, որոնք նախափաթեթավորված չեն եւ չափվում են սպառողի ներկայությամբ.
- դ) **առետրային գործունեություն իրականացնող** նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը վաճառում կամ վաճառքի նպատակով առաջարկում է իր առետրային կամ մասնագիտական գործունեության շրջանակներում գտնվող ապրանքներ.
- ե) **սպառող** նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որն ապրանք է գնում իր առետրային կամ մասնագիտական գործունեության ոլորտին չառնչվող նպատակներով:

Հոդված 3

1. Վաճառքի գինը եւ միավոր գինը նշվում են 1-ին հոդվածում նշված բոլոր ապրանքների դեպքում, եւ ապրանքի միավոր գնի նշումը կարգավորվում է 5-րդ հոդվածի դրույթներով: Ապրանքի միավոր գինն անհրաժեշտ չէ նշել, եթե այն նույնական է վաճառքի գնի հետ:
2. Անդամ պետությունները կարող են որոշել 1-ին պարբերությունը չկիրառել հետեւյալի նկատմամբ.

- ծառայության մատուցման ընթացքում մատակարարված ապրանքներ,
 - սակարկության միջոցով վաճառք եւ արվեստի գործերի ու հնաոճ իրերի վաճառք:
3. Առանց փաթեթվածքի վաճառվող ապրանքների դեպքում պետք է նշվի միայն դրանց միավոր գինը:
4. Ցանկացած գովազդում, որի մեջ նշվում է 1-ին հոդվածում ներկայացված ապրանքների վաճառքի գինը, նշվում է նաեւ միավորի գինը՝ 5-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 4

1. Վաճառքի գինը եւ միավոր գինը պետք է հստակ արտահայտված, հեշտ տարբերակելի եւ հստակ ընթեռնելի լինեն: Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ նշվող գների առավելագույն թիվը լինի սահմանափակ:
2. Միավոր գինը վերաբերում է ազգային եւ Համայնքի դրույթներին համապատասխան հայտարարված քանակությանը:

Եթե ազգային կամ Համայնքի դրույթներով պահանջվում է որոշ նախափաթեթավորված ապրանքների զտաքաշի եւ զուտ չոր քաշի նշում, ապա բավարար է նշել զուտ չոր քաշի միավոր գինը:

Հոդված 5

1. Անդամ պետությունները կարող են հրաժարվել այն ապրանքների միավոր գինը նշելու պարտավորությունից, որոնց համար նման նշումն անօգուտ է՝ պայմանավորված ապրանքների բնույթով կամ օգտագործման նպատակով, կամ հավանական է, որ շփոթմունք առաջացնի:

2. Անդամ պետությունները 1-ին պարբերության իրականացման նպատակով կարող են ոչ պարենային ապրանքների դեպքում սահմանել ապրանքների կամ ապրանքների կատեգորիաների ցանկ, որոնց նկատմամբ կշարունակվի կիրառվել միավոր գինը նշելու պարտավորությունը:

Հոդված 6

Եթե ապրանքի միավոր գնի նշումը մանրաձախ առևտրով զբաղվող որոշ փոքր ձեռնարկությունների համար ավելորդ բեռ կլիներ՝ պայմանավորված վաճառվող ապրանքների քանակով, վաճառքի վայրով, վաճառքի վայրի բնույթով, վաճառքի հատուկ պայմաններով, եթե ապրանքն ուղղակիորեն հասանելի չէ սպառողի կամ ձեռնարկատիրական գործունեության որոշ ձեւերի համար, ինչպիսիք են շրջիկ առևտրի որոշ տեսակները, անդամ պետությունները կարող են 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված ամսաթվին հաջորդող անցումային ժամանակահատվածի ընթացքում նախատեսել, որ նշված ձեռնարկություններում առանց փաթեթվածքի վաճառվող ապրանքներից բացի այլ ապրանքների միավոր գինը նշելու պարտավորությունը չի կիրառվում՝ 12-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 7

Անդամ պետությունները նախատեսում են համապատասխան միջոցներ՝ սույն հրահանգը փոխանցող ազգային օրենսդրության մասին բոլոր շահագրգիռ անձանց տեղեկացնելու համար:

Հոդված 8

Անդամ պետությունները սույն հրահանգի կիրառման ընթացքում ընդունված ազգային դրույթների խախտումների համար սահմանում են տուգանքներ եւ ձեռնարկում են դրանց կիրարկման ապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Այդ տուգանքները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Հոդված 9

1. «Սննդամթերքների գնանշման մասով սպառողների պաշտպանության մասին» 79/581/ԵՏՀ հրահանգը եւ «Ոչ պարենային ապրանքների գնանշման մասով սպառողների պաշտպանության մասին» 88/314/ԵՏՀ հրահանգը⁽¹⁾ փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի նոյեմբերի 29-ի 95/58/ԵՀ հրահանգի 1-ին հոդվածում նշված ինը տարի ժամկետով անցումային ժամանակահատվածը երկարաձգվում է մինչ սույն հրահանգի 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրը:
2. 79/581/ԵՏՀ եւ 88/314/ԵՏՀ հրահանգներն ուժը կորցրած են ճանաչվում սույն հրահանգի 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրվանից:

Հոդված 10

Սույն հրահանգը չի կանխում, որ անդամ պետություններն ընդունեն կամ պահպանեն սպառողներին տրամադրվող տեղեկությունների եւ գների համեմատության առումով ավելի բարենպաստ դրույթներ՝ չխախտելով Պայմանագրով նախատեսված դրանց պարտավորությունները:

Հոդված 11

1. Անդամ պետությունները սույն հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կարգավորումները եւ վարչական դրույթները գործողության մեջ են դնում ոչ ուշ, քան 2000 թվականի մարտի 18-ը: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին: Ընդունված դրույթները կիրառելի են այդ օրվա դրությամբ:

Այն դեպքում, երբ անդամ պետությունները ձեռնարկում են այդ միջոցները, դրանք պետք է պարունակեն սույն հրահանգին արված հղում կամ դրանք

¹ ՊՏ L 299, 12.12.1995 թ., էջ 11:

պետք է իրենց պաշտոնական հրապարակման պահին ուղեկցվեն այդպիսի հղմամբ: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում ազգային օրենսդրության համաձայն ընդունված դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտներում:
3. Անդամ պետությունները փոխանցում են 8-րդ հոդվածով նախատեսված տուգանքները կարգավորող դրույթների եւ դրանցում հետագայում կատարված ցանկացած փոփոխության տեքստերը:

Հոդված 12

Հանձնաժողովը ոչ ուշ, քան 11-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրվանից հետո երեք տարվա ընթացքում սույն հրահանգի եւ մասնավորապես 6-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ համապարփակ հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ, որն ուղեկցվում է առաջարկով:

Եվրոպական պառլամենտը եւ Խորհուրդն այս հիմքով կրկին ուսումնասիրում են 6-րդ հոդվածի դրույթները եւ գործում են, Պայմանագրին համապատասխան, Հանձնաժողովի կողմից առաջին պարբերության մեջ նշված առաջարկի ներկայացումից հետո երեք տարվա ընթացքում:

Հոդված 13

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու օրը:

Հոդված 14

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1998 թվականի փետրվարի 16-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Նախագահ

Խ.Մ. ԽԻԼ-ՌՈՐԼԵՍ

Ջ. ՔԱՆԻՆԳՆԵՄ